ՈՒՍՏԻԱՆ.– Ինչի՞ չեմ ուզում: Պակա՞ս մելիքի կնիկ եմ: Համա էս փալասի կտո՞րը պիտի իմ գլխին մելիքդառնա. Խաբուեց իմ հերը ինձ տուեց սրան: Թէ չէ ես իմ հօր տանը մելիքի աղջիկ էի, հիմի ի՞նչ է իմ հալը: Մի կտոր հաց չունենք:

ՀԱՐԵԻԱՆՈՒՀԻ.– Դու էլ, որ տեսնում ես մարդդ անպէտք է՝ ինքդ աշխատի:

ՈՒՍՏԻԱՆ.– Ախր ո՞նց աշխատեմ, մատաղ: Էսօր հերս գեղի իշխան էր: Ինձ լայե՞ղ է, որ աշխատեմ:

ՀԱՐԵԻԱՆՈՒՀԻ.– Բա ո՞նց է լինելու ձեր բանը:

ՈՒՍՏԻԱՆ.– Ո՞նց է լինելու: Գլուխը կջարդեմ, աշխատել կտամ՝ կուտեմ: Տեսնեմ ո՞վ է մելիքը: Բա ի՞նչ: Կթողնե՞մ, որ մելիքի աղջկան էսպէս պահի, ու հըլա իշխանի տեղ իրան դնի: Ազնիւը ես եմ:

ՀԱՐԵԻԱՆՈՒՀԻ.– Ինչ եմ ասում, Ուստիան, երեխես վախեցել է, մի գաս վախը չափես, հենց ապրես:

ՈՒՍՏԻԱՆ.– Գնանք, ես էլ հենց գեղամէջ էի գնում:

Դուրս են ելնում տան հետեւի մուտքից: Միջոց:

ՆԱԶԱՐ.– (Թմրել, ննջում է գլուխը դռանը հենած:)

ՉԱՐԱՃՃԻ ԵՐԵԽԱՆԵՐ.– (Կամացուկ մօտենում են եւ փայտով նրա քթի հետ խաղալով զարթեցնում են նրան:)

ՆԱԶԱՐ.– (Վեր թռչելով) Հը՞, ո՞վ է: (Ներս փախչելով:)

ԵՐԵԽԱՆԵՐ.– (Փախչում են: Հեռուից) Փսլնքո՛տ Նազար:

ՆԱԶԱՐ.– Ձենևե՛րդ կտրեցէք, լակոտներ, ձեր հերերն էք տեսել, չէք տեսել Քաջ Նազարը: Էս է, գալիս եմ:

ԵՐԵԽԱՆԵՐ. – Վախկոտ Նազար:

ՆԱԶԱՐ.– Սպասեցէք, ձեր հերը կանիծեմ,

ԵՐԵԽԱՆԵՐ.– (Հեռանում են:)

ՆԱԶԱՐ.– (Միջոց: Պառկում է: ճանճերն սկսում են անհանգիստ անել: Քշում է նրանց) Քշա՛… (Ծոյլ հորանջելով) Չեն թողնում քնի մարդ: Ի՛հ՛հ՛ … շան կնիկ, արի մի սրանց քշի. էդ է՞լ ես անեմ: (Ներս է նայում) Վա՛, գնացե՞լ է: Ուստիան: (Ուզում է մորթին վերցնի, ներս գա՝ ծուլանում է եւ վեր ընկնում:) Ի՛հ՛հ՛… բեզարած եմ, թէ վեր կենամ: (Միջոց) Հիմի մութն էլ կընկնի…ո՞վ է իմանում…գողի, աւազակի տարի է: (ճանճերին) Դե, քշա՛, է՛… իմ ցաւն ինձ հերիք չի, դուք էիք պակաս: (Մորթին դէպի ներս է քաշում մարմնով եւ ինքն էլ սողում է ներս) Ի՛հ՛հ՛… Սատանան ասում է, վեր կաց ու միանգամից ջարդի, պրծի: (Բարկանալով) Տո, դուք ում հետ գործ ունէք (խփելով հոս երեսին), այ ձեզ, այ ձեզ, այ ձեզ: Հը, սատկեցի՞ք: Դէ՛, գնացէք: Քաջ Նազա՛րն եմ,